

## ԷԶԵՐ ՀԱՆԷՊԻ ՀԱՅ ԳԱՂԹՈՃԱՆԻ ՊԱՏՄՈՒԹԵՆՆԵՆ

### ՎԱՐԴԻ ՔԵՇԻՇՅԱՆ

(Միրիա, Հալեպ)

Պատմական Մուրիան կամ Ասորիքը հայերուն ծանօթ էր վաղմջական ժամանակներէն, մեր թուականութենէն դարեր առաջ: Հին Արեւելքի երկու տէրութիւններու՝ Հայաստանի եւ Մուրիոյ տարածքներէն կ'անցնէին Արեւմուտքը Արեւելքին կապող միջազգային ճանապարհները: Ասիայէն Եւրոպա երկարող ցամաքի այն ճանապարհը, որ Մուրիան կը կապէր Միջերկրական ծովի ափերուն, ռազմաքաղաքական կարեւոր նշանակութիւն ունենալէ զատ, կը նպաստէր նաեւ սահմանակից երկիրներու՝ Մուրիոյ եւ Հայաստանի միջեւ առեւտրական, մշակութային առնչութիւններու զարգացման: Հելլենիստական դարաշրջանին Մուրիոյ եւ Միջագետքի քաղաքները առեւտրական ընդարձակ կապեր ունէին Հայաստանի գլխաւոր քաղաքներուն հետ: Այս շրջանին հայերու առկայութիւնը այնքան նշանակալի դարձած էր, որ հայ պատմիչներուն առիթ տուած էր Հիսիսային Միջագետքը կոչելու «Միջագետք հայոց»: Հետագային, VIII-IX դարերուն՝ արաբական տիրապետութեան շրջանին, Հայաստանէն արտագաղթն ու բռնագաղթը հսկայական չափեր կը ստանան, հայեր նկատառելի զանգուածներով կը տեղափոխուին ու կը բնակեցուին այստեղ: Հետագայ դարերուն նոյնպէս կը շարունակուի եւ աւելի լայն ծաւալ կը ստանայ հայ բնակչութեան գաղթը դէպի Միջագետք: XI դարէն սկսեալ, թուրք-սելճութեան արշաւանքներուն յաջորդող շրջանին տեղի կ'ունենան հայերու զանգուածային տեղափոխութիւններ, որոնց հետեւանքով զգալիօրէն կը ստուարանայ հայ ազգաբնակչութեան թիւը տարածաշրջանին մէջ:

Հայ ազգաբնակչութիւնը քանակով, եւ յատկապէս իր ունեցած տնտեսական ու հասարակական դերով կը կազմէր Մուրիոյ բնակչութեան հիմնական տարրերէն մեկը, մինչեւ իսկ առանձին համայնքներ հաստատած էր հոս: Հայաշատ կեդրոններ էին Սելեւկիան (Սելեդիա), Կասիոսը (Քեսապ), Ալեքսանդրէթը եւ անոնց շրջակայ գիւղերը: XIV-XVI դարերուն, յատկապէս Կիլիկիան Հայկական թագաւորութեան անկումէն ետք, մեծ թիւով հայեր կ'անցնին Մուրիա: Միջնադարուն Արեւմուտք-Արեւելք առեւտրական կապերու աշխուժացման հետեւանքով, Մուրիոյ քաղաքները կը ստանան միջազգային առեւտրական նշանակութիւն: Այս շրջանին, առանձնապէս մեծ զարգացում կ'ապրի Հալեպի հայկական գաղութը, ուրկէ կ'անցնէր միջազգային ամենէն բանուկ ճանապարհը՝ Թաւրիզէն Հալեպ եւ Ծովեզերեայ նաւահանգիստ երկարող ուղին:

Այլազան ժողովուրդներու խառնարան Հալեպի մէջ ծայր կ'առնէ հայկական գաղթօճախի սկզբնաւորումը, որ հետագայ դարերուն նոր, անհամեմատ մեծ համալրումներ կը ստանայ, հայ բնակչութեան թուաքանակը հասցնելով պատկառելի չափերու:

Հալեայի հայոց մասին մեզի հասած առաջին գրաւոր վկայութիւնը 1329 թ.-ի ձեռագիր Աւետարանի մը յիշատակարանն է, ըստ որուն ձեռագիրը գրուած ու ծաղկուած է Հալեայ, «ընդ հովան[ե]յս» Ս. Աստուածածին եկեղեցւոյ,<sup>1</sup> որ փաստօրէն կը վկայէ թէ այդ տարիներուն արդէն Հալեայի մէջ գոյութիւն ունէր կազմաւորուած հայ գաղութ իր ինքնուրոյն եկեղեցիով:

1500թ. հալեպահայ մեծատուն Ռեյիս Իսա իր միջոցներով կառուցել կու տայ «ղարպաս քազաւորական»-ը՝ հայոց առաջնորդարանը, ուխտաւորներու յատուկ հիւրատուն եւ Ս. Քառասուն Մանուկ մատուռը: Նոյն քուականին դէպի Երուսաղէմ ուխտագնացութեան ճամպապահին, Մովսէս վարդապետին ընկերակցող անանուն ուխտագնաց մը, այդ մասին չափածոյ յիշատակարան կը ձգէ ձեռագիր «Գանձարան»-ի մը մէջ.

Մովսէս [վարդապետ] եւ ես ծառայն,

Եկայք յաշխարհս արեւմտեան:

Ձի տենչացաք սր. Յարութե[ա]ն.

Եկեալ հասաք սուներս շամեան,

Հալապ քաղաք ի շահաստան:

Հանդիպեցաք ուրախութե[ա]ն,

Եւ ցնծացաք հոգով լըման,

Ձի նոր շինեալ էր սր. խորան,

Յանուն սրբոց Խ[քառասուն] Մանկան:<sup>2</sup>

Գաղութն առաւել կ'ընդարձակուի XVI դարէն սկսեալ: Երկրի առեւտրական կարեւոր դիրքը, տեղի հայ ազգաբնակչութեան կենսքին ու կենցաղին քարգաւառ վիճակը, աշխատանքի համար նպաստաւոր պայմանները դէպի իրենց կը քաշէին հայ առեւտրա-արհեստատրական խաւերը: Հալեայի Ս. Քառասուն Մանուկ եկեղեցւոյ մուրաբերուած ձեռագիրներ, եկեղեցական սպասներու վրայ գտնուող հնօրեայ յիշատակագրութիւններ կը վկայեն ոչ միայն հայկական տարրեր բնակավայրերէ Հալեայ հասած հայերու մասին, այլեւ յստակ պատկերացում կու տան անոնց տնտեսական դիրքին, զբաղումներուն, արհեստի տեսակներուն եւ այլ մանրամասնութիւններու վերաբերեալ: Նոյնքան արժէքաւոր տեղեկութիւններ կը պարունակեն նաեւ տապանագիր արձանագրութիւնները՝ Հալեայ «ղարպա մնացած» հայ վաճառականներու եւ վարպետ-արհեստատրներու մասին:<sup>3</sup>

XVI դարու վերջերուն, Սսի կաթողիկոսութիւնը Սիսը անապահով նկատելով, ժամանակատրապէս կը հաստատուի Հալեայ: Մեծ քիտով եկեղեցական նշանաւոր գործիչներ հոգեւոր-մշակութային աշխույժ գործունէութիւն կը ծաւալեն այստեղ: Այսպիսով Հալեայ կը դառնայ ժամանակի հայ եկեղեցական, վարչական-տնտեսական եւ մշակութային կարեւոր կեդրոններէն մէկը իր նշանաւոր Ս. Աստուածածին եւ Ս. Քառասուն Մանուկ եկեղեցիներով: Այս գոյգ եկեղեցիներուն կից գործած է նաեւ դասատունը, կամ դպրատունը, որ ուսումնական կեդրոն ըլլալէ զատ եղած է հայ գրչութեան եւ դպրութեան դարբնոց: Բազմաթիւ վարպետ գրիչներ, ծաղկող մանրանկարիչներ այստեղ օրինակած են 200-է աւելի ձեռագիր մատենաներ,

<sup>1</sup> Միրմէնեան Արաւազդ Արք., Պատմութիւն Հալեայի Հայոց, հ. 3, Փարիզ, էջ 25-26:

<sup>2</sup> Միրմէնեան Արաւազդ Արք., Յուցակ հայերէն ձեռագրաց Հալեայի, հ.1, Երուսաղէմ, 1935, էջ 151:

<sup>3</sup> Տե՛ս Միրմէնեան Արաւազդ Արք., Պատմութիւն Հալեայի ազգային գերեզմանատանց, Հալեայ, 1935:

տասնեակ մատենագիրներ ստեղծած են աստուածաբանական եւ այլ բնույթի արժեքատու աշխատություններ:

Դարեր շարունակ Հալեպը իր աշխարհագրական եւ տնտեսական դիրքով կարելուր կեդրոն եղած է Արեւմտեան Հայաստանէն եւ Կիլիկիայէն գաղթական ու պանդխտացող հայերուն համար: Ամէն տեսակ ճնշումներէ, ծանր հարկերէ եւ կեանքի ու ապրուստի անապահովութենէն խոյս տալով, աշխատանքի ընդունակ տարրերը, յաճախ միայնակ, երբեմն ընտանիքներով ձգելով հայրենի բնաշխարհը կու գային Հալեպ: Պանդուխտները, մեծ մասամբ երիտասարդ տղամարդիկ, Հալեպ կու գային քանի մը տարի աշխատելու եւ դրամ վաստակելու համար: Ասոնք կ'ապրէին վերադարձի յոյսով եւ մեծ զոհողութիւններու ու խնայողութիւններու գնով, որոշ գումարի մը տիրացած կը վերադառնային իրենց հարազատ բնակավայրերը: Զիչ չէին նաեւ այնպիսի դէպքերը, երբ երկար ժամանակ Հալեպ մնալէ ետք, յարմարութիւն կեանքի մոռ պայմաններուն, այլեւս չէին վերադառնար ու կը հաստատուէին հոս: Հարկ է նշել որ, Հալեպի մէջ պանդուխտ-գաղթականները ընդհանրապէս նկատառելի թիւ կը կազմէին «տեղացի» հայերու համեմատութեամբ: Գաղութը շարունակ կը ստուարանար եւ կը մուազէր գաղթական եւ պանդուխտ հայերու հաշտոյն: Եթէ մախապէս, XVI- XVII դարերուն Հալեպ հաստատուած հայ գաղթականութեան գերակշռող մեծամասնութիւնը կը կազմէին խոշոր վաճառականներն ու արհեստավարները, ապա XVIII դարէն սկսեալ հոս կը կեդրոնանան հայկական տարբեր բնակավայրերէ՝ Ալեքէն, Էրզրումէն, Արաբկիրէն, Չմշկածագէն, Ուրֆայէն, Տիգրանակերտէն, Սասունէն եւ այլ վայրերէ արհեստներով եւ զանազան ծառայողական աշխատանքներով զբաղող պանդուխտներ: Այս շրջանին արդէն Հալեպը կը հանդիսանար պանդխտութեան հիմնական կեդրոններէն մէկը՝ Կ. Պոլսէն եւ Զմիւռնիայէն յետոյ: Պատահական չէ, որ հայ ժողովրդական պանդխտութեան երգերուն մէջ, յաճախ կը յիշատակուի նաեւ Հալեպը, իր-րեւ՝ «ղարիպի աշխարհ»:

Քեզ խաբար հարցնողին չես տանիր տալապ,

Չայնիկդ անուշ կու գայ քան զջրի տօլապ.

Կռո՛նկ, Պաղտատ իջնուս կամ թէ ի Հալապ,

Կռո՛նկ, մեր աշխարհէն խաբրիկ մը չունի՞ս:

Չնայած անոր որ Հալեպը իր բնակչութեան թիւով եւ տնտեսական դիրքով երրորդ տեղը կը գրաւէր Օսմանեան կայսրութեան մէջ՝ Կ. Պոլսէն եւ Գահիթէն ետք, այդուհանդերձ XVIII դարու կէսերէն սկսեալ Հալեպը կորսնցուցած էր մախտոյ դարերու իր փառքն ու համբաւը, առեւտրատնտեսական առաջատար դիրքը: Օսմանեան տիրապետութեան վարած քաղաքականութիւնը, հարստահարող օրէնքներն ու սահմանուած տուրքերը արգելակած էին երկրին տնտեսական եռուզեռը: Անոր առեւտրատնտեսական կեանքին վրայ իր բացասական անդրադարձը կը ձգէ նաեւ միջազգային ցամաքային ուղիներու կարելութեան մուգումը: Միաժամանակ կը սաստկանան կամայականութիւններն ու բռնութիւնները տեղի քրիստոնեաներուն նկատմամբ, որոնց հետեւանքով աստիճանաբար Հալեպէն կը հեռանան մեծատուն հայ խոճաններն ու առեւտրականները, արհեստավարական բարձր խաւը:

Պետական տուրքերու «ճիզլե»-ի տոմարական արձանագրութիւններէն<sup>4</sup> կը պարզուի, որ 1740թ.-ին Հալէպի մէջ «ճիզլե» վճարած են 2030 տեղաբնակ հայեր, 1754թ.-ին՝ 1730, իսկ 1849թ.-ին՝ 965: Աւելցնենք որ տուրքերու վճարումը պարտադիր էր բոլոր աշխատանքի ատակ 18-էն 60-70 տարիքի տղամարդոց համար, եւ խիստ վերահսկողութիւն սահմանուած էր պետութեան կողմէ: Նոյն արձանագրութիւններէն կ'երեւի թէ հայ ազգաբնակչութիւնը հարկիւր առ հարկիւր վճարած է իր քաժին գլխահարկը: Թուական այս տուեալները լաւագոյնս կը հաստատեն, թէ կարգ մը հանգամանքներու թերմով, յատկապէս XVIII-XIX դարու սահմանագլուխ խիստ նուազած է հալէպահայութեան քիւը, անոր հետ մաւել մոտաւորապէս են հայ արհեստաւորներուն եւ պանդուխտներուն շարքերը: Ասոր հիմնական պատճառները, քացի վերոնշեալ քաղաքական, տնտեսական ազդակներէն, պէտք է նկատել մոլորքան եւ թերեւս աւելի ներգործօն՝ այս շրջանին պատահած աղէտալի դէպքերն ու արեւալիքները, ի մասնաւորի քաղաքին մէջ պատահած համաճարակները, 1819-1820թթ. ներքին խռովութիւնները, եւ մանաւանդ 1822-ին պատահած անաւոր երկրաշարժը, որ աւելի քան 10 հազար զոհ խլած է ընդամենը 80-90 հազար բնակչութիւն ունեցող քաղաքէն:

Թէեւ Հալէպ կը շարունակէր մնալ շրջանին գլխաւոր հայահոծ կեդրոններէն, քայքայ արդէն խիստ նուազած, չորս-հինգ հազար հայ բնակչութեամբ:

Հիմեն ի վեր հայերը տեղաբաշխուած էին Հալէպի հիմաւոր քանակավայրերուն՝ Ս. Քաթասուն Մանուկ եւ Ս. Աստուածածին եկեղեցիներու շրջակայքը՝ Սալիպէ եւ Սիսի կոչուող քաղամասերուն մէջ: Անոնք գլխաւորաբար կը զբաղէին առեւտուրով եւ արհեստագործութեամբ: Հայ արհեստաւորները ոչ միայն աշխոյժ մասնակցութիւն ունէին արհեստագործութեան մէջ, այլեւ արհեստի կարգ մը տեսակներ հայ վարպետներու մեծաշնորհը կը հանդիսանային գաղթօճախին մէջ, ինչպէս ոսկերչութիւնը, ջուլիակութիւնը, խաղախորդութիւնը, կօշկակարութիւնը, դերձակութիւնը, հացագործութիւնը եւ այլն:<sup>5</sup>

Ընդհանուր առմամբ Հալէպի արհեստագործութեան մէջ քուային մեծամասնութիւն կը կազմէին տեղացի եւ գաղթական հայ արհեստաւորները: «ճիզլե»-ի տոմարական արձանագրութիւններուն համաձայն, 1844թ.-ին տուրք վճարած են թիով 1000 տեղաբնակ հայեր: Հալէպ գտնուող «օտարականները»՝ պանդուխտները 100-էն 90 յարաբերութեամբ եղած են հայերը, ընդ որում՝ Հալէպ հաստատուած գաղթական եւ պանդուխտ հայերուն ընդհանուր թիւը 1844թ.-ին եղած է 766, իսկ 1849-ին՝ 726 հոգի: Ասոնց հիմ-

<sup>4</sup> Essays on Ottoman Civilization. Տե՛ս՝ *Hidemitsu Kuroki*. Zimmis in Mid-Nineteenth Century Aleppo: An Analysis of Jizya Defteris. 205-250. Praha, 1998.

Տե՛ս մաւել *Hidemitsu Kuroki*. Zimmis in Mid-Nineteenth Century Aleppo: An Analysis of Jizya Defteris. /presented to the 12<sup>th</sup> International Symposium of CIEPO, in Prague 1996/:

«ճիզլե» - ոչ իսլամներու՝ քրիստոնեաներու եւ հրեաներու գլխահարկ:

<sup>5</sup> *Թոփուզեան Յովհաննէս*, Սիփիայի եւ Լիբանանի հայկական գաղթօճախների պատմութիւն (1841-1946), Երեւան, 1986, էջ 53:

նակսն մասը, 52 առ հարիրը եկած էր Սասունեն եւ Արարկիրէն:<sup>6</sup> Նոյն արձանագրութեանց համաձայն Հալեայի մէջ գործող 59 ոսկերիչներէն 34-ը հայեր էին: Այս շրջանին քաղաքին մէջ կային 154 սասունցի պանդուխտներ, որոնցմէ 111-ը կաշխատէր հացագործութեամբ եւ յարակից արհեստներով, իսկ 39-ը բեռնակիրներ էին: Մէկ այլ արձանագրութեան համաձայն, Հալեայի 114 հացագործներէն 71-ը պանդուխտ սասունցիներ են, իսկ 35-ը տեղացի հայեր, ընդ որում հացագործ տեղացի հայերուն մեծամասնութիւնը դարձեալ սասունցիներ էին, որոնք երկար ժամանակէ ի վեր հաստատուած էին հոս: Նոյնն էր պարագան նաեւ փռապաններուն. 46 փռապաններէն 36-ը եկուոր սասունցիներ էին, իսկ 4-ը՝ քնիկ հայեր:<sup>7</sup> Ընդհանուր թիւին մէջ մեծամասնութիւն կը կազմէին նաեւ ջաղացպանները. 5 եկուոր ջաղացպաններէն 4-ը դարձեալ սասունցի պանդուխտներ էին: Հայ արհեստատուները մեծամասնութիւն կը կազմէին նաեւ զանազան այլ արհեստներու մէջ, յայտնի էին ներկարար, մուշտակագործ, դերձակ, սափրիչ, ժամագործ, զինագործ վարպետները:

Բաւական ստուար թիւ կը կազմէին նաեւ որոշակի մասնագիտացում չպահանջող, ծառայողական աշխատանքներով զբաղված գաղթական եւ պանդուխտ հայերը: 250 պանդուխտ արարկիրցիներուն մէջ կային 104 բեռնակիրներ, 21 օտապաշիներ (սենեկապան), 27 սպասաւորներ:

Հիմնորոշ էր նաեւ հայ վաճառականներուն դերը Սուրիոյ արհեստագործութեան զարգացման, առետրական կապերու ընդլայնման մէջ: Հալեայի առետրական հրապարակին վրայ 101 քարավանապետներէն՝ 98-ը դուրսէն եկած առետրականներ էին, մեծ մասամբ արեւելեան նահանգներէն եկած հայեր: Տարբեր ազգերու պատկանող շուրջ 130 տարանցիկ վաճառականներուն մէջ 23-ը տեղաբնակ հայեր էին, կային նաեւ 23 դրսեցի վաճառականներ, ամենայն հաւանականութեամբ դարձեալ հայկական գաւառներէ եկած առետրականներ:<sup>8</sup>

Թէպէտ Հալեայի մէջ պանդուխտ արհեստատուները, այլ վայրերու քաղղատմամբ, կը գործէին անհամեմատ ազատ եւ թոյլատու պայմաններու տակ, այդուհանդերձ ակներեւ է որ գոյութիւն ունէին պետական որոշակի սահմանափակումներ, ի մասնաւորի գաղթական եւ պանդուխտ արհեստատուներուն նկատմամբ, որոնց արգիլուած էր սեփական խանութ ունենալ: Պատահական չէ որ նոյն այդ տարիներուն Հալեայի 252 խանութպաններու շարքին չի յիշուիր գէթ մէկ «օտարական»՝ պանդուխտ կամ գաղթական:<sup>9</sup>

Գտնուելով առետրական տարանցիկ ճանապարհի վրայ, Հալեայը վաճառականական կարեւոր կեդրոն էր ինչպէս երտպական, այնպէս ալ ներքին գաւառներու առետրական կապերու զարգացման համար: Այդ իսկ պատճառով, Հալեայի վաճառականները միաժամանակ ներմուծող եւ արտածող առետրականներ էին եւ միջնորդ օղակի դեր կը կատարէին արտաքին եւ ներքին առետուրի մէջ: Բազմաթիւ վաճառականներ (խոշոր կամ մանրավաճառ) առետրական կապեր ունէին Կ.Պոլսոյ, Այնթապի, Տիարպէքիի, Մուսուլի, Բաղէշի, Կարնոյ, Ակնի, Ատանայի, Արարկիրի,

<sup>6</sup> Տե՛ս *Hidemitsu Kuroki*. Ոշոած աշխատութիւն, էջ 232-233:

<sup>7</sup> Տե՛ս նոյն տեղը:

<sup>8</sup> Նոյն տեղը, էջ 228:

<sup>9</sup> Նոյն տեղը, էջ 233:

ինչպես եւ արտասահմանի հետ: Կարտահանուէին տեղական գիւղատնտեսական եւ արհեստագործական ապրանքներ, եւրոպական արդիւնաբերական գործուածքներ, մանուածք, երկաթեղէն, անագ, ապակեղէն, ներկանիւթեր, մեծ քանակութեամբ սուրճ, շաքար, օճառ, համեմունքներ եւ այլն:<sup>10</sup>

Ինչպես Արեւմտեան Հայաստանի մեծ քաղաքներուն, Հալէպի մէջ նոյնպէս արհեստատրները եւ առետրականները համախմբուած էին էւնաֆութիւններու (համքարութիւններու) մէջ: Տնտեսական եւ քաղաքական անկայուն վիճակը, անձի եւ գոյքի անապահովութիւնը, արհեստատրները, առետրականներն ու աշխատատրական միւս խաւերը կը մղէին միատրուելու համապատասխան կազմակերպութիւններու մէջ: Հալէպի էւնաֆութիւններուն առաջացումը եւս կապուած էր տնտեսական տարատեսակ տազնապներու, արհեստատրներու անպաշտպան դրութեան հետ, երբ անհրաժեշտ էր որեւէ դժուարութեան պարագային օգնութեան ձեռք երկարել արհեստակցին: Յաւաք, ուսումնասիրողները, Հալէպի գաղթօճախի առետուրին, արհեստագործութեան եւ հասարակական կեանքին մէջ կարեւոր այս հարցին գրեթէ չեն անդրադարձած, պատճառը ակնհայտաբար աղբիւրներու սակաւութիւնն է: Թէպէտ այդ կազմակերպութիւններուն մասին փաստեր կը քացակային, սակայն Հալէպի արհեստագործութեան ընդհանուր պատկերը ի մի բերելով պարզորոշ կը դառնայ էւնաֆութիւններու քաւական ընդարձակ ցանցի մը գոյութիւնը: Անվարան կարելի է ըսել, որ անոնց ակունքները ծայր կ'առնեն տակաւին միջնադարէն եւ գուցէ աւելի հին ժամանակներէ: Անկասկած XVI-XVII դարերուն հալէպահայ հոգեւոր-հասարակական կեանքին մէջ նշանակալի դեր ունեցած են տարբեր բնոյթի՝ կրօնական, յարանուանական, արհեստակցական եղբայրութիւնները, որոնց մասին եղած կցկտուր տեղեկութիւններուն հիման վրայ կարելի է որոշ եզրահանգումներ կատարել: Հինէն ի վեր հալէպահայ տարբեր հասարակաշերտեր միատրուած են այլազան կազմակերպութիւններու շուրջ. այդ կը վկայեն կարգ մը հնօրեայ արձանագրութիւններ, որոնց մէջ յիշատակուող «գոյումճիպաշի», «թերգիպաշի», «էքմէքճիպաշի», «շէլիս» կոչումները նոյն ինքն էւնաֆներու պարագլուխներն էին:<sup>11</sup> Էւնաֆական միութիւնները կամ եղբայրութիւնները ունէին ներքին կանոնադրութիւն, ղեկավար մարմիններ, զանձարկղ: Տարբեր վայրերէ Հալէպ գաղթած արհեստատրները, իրենց բնակավայրերու էւնաֆական միութիւնները կը պահպանէին նոր գաղթավայրին մէջ, որոնք ընդհանուր բնոյթով թեւ նոյնաման, սակայն տարանջատուած էին տարբեր արհեստակցական եւ այլ պատուարներով: Ասով պէտք է քացատրել նաեւ Հալէպի մէջ արհեստներուն որոշակի խումբի պատկանելիութեան փաստը: Բնորոշ է, որ Հալէպի մէջ էւնաֆութիւններու մէջ համախմբուած արհեստակիցները ընդհանրապէս նաեւ հայրենակիցներ էին, եւ պատահական չէ, որ այս կամ այն արհեստը կը հանդիսանար հայրենակցական խումբի մը մենաշնորհը, ինչպէս օրինակ, Հալէպ հաստատուած տիարպէքիբցիները զիատարաբար կը զբաղէին կաշեգործութեամբ եւ կօշկակարութեամբ: Ներկարարութիւնը եւ ներկերու առետուրը յատուկ էր այնքապցի եւ մարաշցի վարպետներուն: Դերձակները մեծ մասամբ բնիկ արաբկիբցիներ էին, իսկ հացագործու-

<sup>10</sup> Թոփուզեան Յովհաննէս, նշուած աշխատութիւն, էջ 60:

<sup>11</sup> Նոյն տեղը, էջ 57:

թիւնն ու ջաղացպանութիւնը կը համարուէին սասունցիներուն մենաշնորհը: Պարզորոշ է, որ էսնաֆութիւնները ինչ-որ տեղ նաեւ հայրենակցական խմբաւորումներ էին, որ կը նշանակէր հավաքականօրէն դիմագրաւել դժուարութիւնները, միասնաբար օգնել աղքատ կամ որեւէ դժբախտութեան հանդիպած հայրենակցին: Որպէս այդպիսին, էսնաֆութիւնները փաստօրէն կը կազմէին հայ ազգաբնակչութեան ամենէն կենսունակ, ժողովուրդի ներքին հարցերով ու մտահոգութիւններով եետաքրքրուող տարրը: Առանձին էսնաֆութիւններ ունէին ոսկերիչները, ջուլհակները, դերձակները, կօշկակարները, հացագործները, ջաղացպանները, ներկարարները, վաճառականները եւ այլն, որոնց գոյութեան մասին կը յուշեն կարգ մը հնօրեայ յիշատակագրութիւններ: Հալեայի արհեստագործութեան մէջ ամենէն մարդաշատը մանուսայագործ, մետաքսագործ, կտաւագործ արհեստաւորներն էին, որոնց արտադրանքը կը հասնէր Փոքր Ասիոյ քաղաքներն ու մինչև Եւրոպա: Յայտնի էր ներկարարներու էսնաֆութիւնը, որուն մասին աղբիւրները կը հաղորդեն, թէ 1680թ.-ին ներկարարներու խումբ մը դիմած է Հալեայի մէջ Ֆրանսայի եիւպատոսին՝ ֆրանսական լեղակի ներմուծումը դիւրացնելու համար:<sup>12</sup>

Փաստերը ցոյց կու տան, որ XVII-XVIII դարերուն արդէն, սասունցիները Հալեայի մէջ ունէին իրենց յատուկ կազմակերպութիւնը, որուն մէջ համախմբուած էին Սասունէն գաղթած արհեստաւորներն ու պանդուխտները:

*Սասունցիները Հալեայի մէջ:* Հալեայ հաստատուած հայ ազգաբնակչութեան մէջ XVII դարէն սկսեալ նկատառելի թիւ կը կազմէին սասունցի գաղթականները: Սասունի հայութեան Հալեայ արտագաղթը կապուած էր մէկ կողմէն երկրին մէջ տիրող քաղաքական-տնտեսական ծանր կացութեան, միւս կողմէ՝ Հալեայի մէջ աշխատանքի համեմատաբար քարենպաստ պայմաններուն հետ: Սասունի լեռնային ու քարքարուտ բնութիւնը, ինչպէս նաեւ թուրք ու քիւրտ ցեղախումբերուն ասպատակութիւնները արգելակած էին արհեստներու եւ տնտեսութեան զարգացումը այստեղ: Այդ է պատճառը, որ բնակչութեան կարելոր մէկ հատուածը թէ՛ կ'երդրոնէ, թէ՛ զիւղերէն առեւտրական նպատակներով, կամ պարզապէս դրամ վաստակելու համար պանդուխտութեան կը դիմէր մօտակայ եւ հեռաւոր վայրեր, այդ թուին նաեւ Հալեայ: Սասունի հայութեան ըմբոստ ու ազատատենչ ոգին մղած էր զինք ապստամբութեան, որուն հետեւանքով ան կ'ողկացած ու մեկուսացած կանգնած էր տնտեսական քայքայման եզրին: Սասուն գաւառի բազմաթիւ զիւղերէն ու գաւառակներէն ծայրայեղ չքաւորութեան մատնուած էր յատկապէս Սասնոյ Բուսանաց գաւառակը, որուն հետեւանքով անոր բնակչութեան գերակշռող մեծամասնութիւնը կը դիմէ պանդխտութեան: Իւրաքանչիւր ընտանիքէ մէկ, երբեմն նաեւ երկու եւ աւելի տղամարդ կը պանդխտանային քանի մը տարի, որոնց վերադարձէն ետք անոնց կը փոխարինէին ընտանիքին միւս անդամները, եւ այսպէս շարունակ: Հալեայ կը հանդիսանար սասունցիին պանդխտութեան հիմնական վայրերէն մէկը, ուրկէ փոքրաթիւ պանդուխտներ կ'անցնէին նաեւ մօտակայ Այնթապ ու Քիլիս քաղաքները:

Առհասարակ սասունցիները Հալեայի մէջ ապրած են ինքնայատուկ բարքերով ու սովորութիւններով: Հետաքրքրական է, որ նոյնիսկ երկար

<sup>12</sup> Միլլմէհան Արտավազդ Արք., Պատմութիւն Հալեայի հայոց, հ. 3, էջ 974:

տարիներ Հալեպ մնալով անոնք ոչ միայն հաւատարիմ մնացած են իրենց տոկոսներում, այլեւ պահպանած են Մասուն գաւառի տարազն ու քար-քառը: Արաւազդ Արք. Միքմէեան իր «Պատմութիւն Հալեպի Հայոց»-ին մէջ խօսելով Հալեպ հաստատուած սասունցիներուն մասին կը գրէ թէ սասունցի ազգայիները իրենց իրայատուկ տարազով ու կենցաղավարութեամբ մեծ հետաքրքրութիւն ստեղծած էին Հալեպի մէջ, իրենց վրայ կեդրոնացնելով հասարակայնութեան ուշադրութիւնը, թերեւս զարմանալի կը թուի այն. որ անոնց հայ պատկանելիութեան մասին քաղաքին մէջ գիտէին միայն տեղաբնակ հայերը, իսկ ուրիշներ կը կարծէին թէ անոնք այլ ժողովուրդէ մը սերած են:<sup>13</sup> Այս երեւոյթը ի հարկէ կը քացատրուի անով, որ Մասունի հայութիւնը խիստ տարբեր է իր առանձնայատուկ կենսաձեւով ու քարքերով ընդհանուր ոչինչ ունէր դարերու ընթացքին ազգային դիմապատկերը կորսնցուցած տեղի հայութեան հետ: «Ան հայրենիքի սիրով եւ կարօտով զեղուն, անոր հնամենի աւանդութեամբ սնած ու ապրած՝ չէ մոռացած երգն ու տաղը, պարն ու սրինգը իր հայրենի լեռներուն, եւ շարունակ իր աշխատանոցին մէջ երգած ու արտասանած է գողտրիկ երգեր, իր հոգեթով սրինգովը»<sup>14</sup>: Հետաքրքրական է յատկապէս այն վկայութիւնը, որ տօնական օրերուն սասունցիները կը հաւաքուէին քաղաքի կեդրոնական հրապարակը եւ հոծ բազմութեան առջեւ բոլորաձեւ շուրջպարեր կազմելով կը կատարէին Մասնոյ ազգագրական երգեր ու պարեր:

Ըսինք թէ հալեպաբնակ սասունցիներ, հաւատարիմ իրենց ազգային նկարագրին եւ աւանդութեան, աշխոյժ մասնակցութիւն ունեցած են գաղութի ազգային-եկեղեցական կեանքին: Մասունի հայրենասէր ու եկեղեցանուէր ժողովուրդը, հակառակ իր խեղճ կացութեան, սրտաբուխ նուիրատուութիւններով աստարած է տեղի հայ եկեղեցւոյն: Հալեպի Մ. Քառասուն Մանուկ եկեղեցւոյն նուիրաբերուած կարգ մը եկեղեցական ծիսական առարկաներ իրենց վրայ կը կրեն սասունցի ազգայիներու եւ անոնց ընտանիքներու անդամներուն անունները: Մ. Քառասնից Մանկանց եկեղեցւոյ հաւաքածոյի ընտիր նմոյշներէն է «Յիսուսի Սկրտութիւնը» սրբանկարը, որն ունի հետեւեալ յիշատակագրութիւնը. «Յիշատակ է պատկերս Մասունցի մահտեսի ճ[ա]նօհին եւ կնոջն Խանումին եւ որդւոյն Ագատին, Միասարին, ի դուռն Սր. Մանկանց եկեղեցւոյն. թվն ՌՄԵԺԺ (1756)»<sup>15</sup>:

Նոյն եկեղեցւոյն նուիրաբերուած արծաթեայ բուրվառ մը կը կրէ այսպիսի յիշատակագրութիւն. «Յիշատակ է Մասունցի Գասպարի՞ն եւ ծնողացն հոգւոյն՝ ի դուռն Ս. Բ.. Մանկանց եկեղեցւոյ: Թ. Հայոց 1251 (=1802)»<sup>16</sup>:

1894թ.-ին «Մասունցի բարեպաշտ ժողովրդեան նիւթական ձեռնտուութեամբ» Առաջնորդարանի շրջաբակին մէջ կը կառուցուի այնքան անհրաժեշտ ջրամբար մը:

Յայտնի է որ Հալեպ պանդխտած սասունցիներ հայրենիք կը վերադառնային նորանոր ըմբռնումներով, հանդիսանալով նոր զաղափարներու տարածողները իրենց ծննդավայրին մէջ: Մասունի համատարած տգիտութիւնը եւ գաւառին քարգաւառումը ուսման եւ լուսատրութեան մէջ փնտռե-

<sup>13</sup> Նոյն տեղը, էջ 680:

<sup>14</sup> Նոյն տեղը:

<sup>15</sup> Նոյն տեղը, էջ 943:

<sup>16</sup> Նոյն տեղը, էջ 908:

լու սասունցիներուն ձգտումը կը մղեր զանոնք բազում զոհողութիւններու գնով իրենց զաւակները Հալեայ քերելով ուսումի տալ: Ասյպէս, Հալեայ կրթութիւն ստացած մեծ քիտվ ուսեալ ու կրթուած սասունցիներ վերադառնալով իրենց ծննդավայրը ծառայած են որպէս ուսուցիչ, քահանայ, իրենց նպաստը քերելով զաւառի լուսատրութեան գործին:

Հակառակ ընդունուած կարգին, քիչ չէին նաեւ այնպիսի դէպքերը, երբ պանդուխտ սասունցիներուն զաւակները, կրթութիւն ստանալէ ետք, այլեւս չէին վերադառնար հայրենիք ու կը հաստատուէին Հալեայ: Յարմարուելով հանդերձ մոր քնակավայրի կեանքի ու կենցաղի պայմաններուն, անոնք կ'ապրէին հայրենիքի կարօտով, հոգեկան ամուր քելերով կապուած մնալով հայրենի եզերքին, հարազատ քնաշխարհին, քառ ու քանին:

Հալեայ «ծնած ու սնած» սասունցիներուն մէջ ստանձին յիշատակութեան արժանի անուն է Գրիգոր Հէլեպցի (Սասունցի) գրիչը, որ գրչութեան արուեստին տիրացած է Հալեայի մէջ՝ տակաւին 15 տարեկանին: Գրիգոր գրիչը ամբողջ 30 տարի օրինակած է մեծ քիտվ ձեռագիր մատենաներ, որոնցմէ մէկուն մէջ կը հանդիպինք «մեղապարտ եւ անիմաստ» գրչին հետեւեալ յիշատակարանին. «Դարձեալ յիշեցէք... զգծողս սորա՝ զԳրիգոր զանարժան անուանս զՍասնցի, որ ծնեալ եւ սնեալ եմ ի Բերիա՝ որ է Հալապ... ԺԵ(=15) ամաց էի, ուսա՝ զրագրութիւն մինչեւ ԽԵ(=45) հասա՝. Լ(=30) տարի կատարեալ գիր գրեցի բազում, Ի(=20) Շարական, Գ(=3) [Յ]այսմօտր եւ այլ գիրք, որի համար չիկա...»<sup>17</sup>:

Չարմանալի չէ՞ արդեօք, մեզի հասած հայ քանահիւսութեան գողտրիկ այս պատումը, ուր Սասունցի Դաւիթի կերպարը կը կապուի Հալեայի հետ: Ըստ աւանդութեան Հալեայ քաղաքին մօտ գտնուող քարձր քլուրի վրայ գտնուող քերդը կը կոչուի «Սասունցի Դաւիթի» քերդ: Կ'ըսեն թէ այդ քերդը կառուցած է Սասունցի Դաւիթը: Ամէն օր լուսաբացին, Քուտկիկ Չալալին հեծած Դաւիթը մէկ ակնթարթի մէջ հասած է Հալեայ, աշխատած քերդին շինարարութեան վրայ եւ երեկոյեան մէկ ակնթարթի մէջ կրկին վերադարձած է Սասուն: Բերդին պարիսպէն կախուած հսկայական գուրզը՝ Դաւիթի գուրզն է:<sup>18</sup>

<sup>17</sup> Բարգէն Աթոռակից *Կաթողիկոս (Կիլիսեբեան)*, Յուցակ ձեռագրաց Անկիւրիոյ Կարմիր Վանուց եւ շրջակայից, Անքիլիաս, 1957, էջ 221:

<sup>18</sup> Տե՛ս *Ղանալանեան Արամ*, «Աւանդապատում», Երեւան, 1969, էջ ԸԸ, ԸԺԲ, ԸԺԳ, 214, 460: Արամ 'Նսնալանեան իր աշխատութեան մէջ կը հաւաստէ թէ աւանդապատումը պատմական եփմբ ունի, եւ այն կը համարէ արձագանգը Սասունի քնակչութեան յարարներութիւններուն Եզիպտոսի (=Մսրա) հետ՝ էյուպեան կամ Էալեսուն հարստութեան շրջանին (1169-1250): Վաստակաշատ գիտնականին մեկնութիւնը սուսնց երբեք վիճարկելու, կը ներկայացնենք այլ տարբերակ մը, ըստ որուն Սասունցի Դաւիթի Հալեայի քերդի հետ աղերսը չպէտք է որոնել հետուտր անցեալի եւ մանաւանդ հետուտր վայրերու մէջ: Կարելի է ենթադրել, որ այն Սասունցի Դաւիթ էպոսի թագմաթի պատումներէն մէկն է, որ արձագանգն է պանդխտութեան ճանապարհով Սասուն հասած Հալեայ քաղաքին մասին նկարագրութիւններուն, զրոյցներուն, որ ուղղուկիօրէն իր արտացոլումը գտած է աւանդութեան մէջ: Հալեպը թէն հետուտր, գուցէ նաեւ մասամբ հարազատացած քաղաք էր սասունցիին համար, ուր կը գտնուէին իր «ղաքիպ մնացած» զաւակներն ու մերձաւորները, իսկ Հալեայի ամբալնու ու հսկայ քերդը, սասանցիին մտապատկերին մէջ միմիայն Սասունցի Դաւիթի պէս գերութի տէր հերոս մը կը նար կառուցել: Այսպիսի զրոյց-աւանդապատումներով Հալեպը աւելի սրբամօտ ու սիրելի կը դառնար սասունցիին համար:

Ըսիք թե, հիմեն ի վեր Հալեպի հացթուխ վարպետները եղած են սասունցիները: Ասոց Հալեպի մեջ ստեղծած են ինքնուրոյն էսնաֆութիւն, որուն շուրջ համախմբուած են սասունցի հացագործները, ջաղացպանները, փռապանները, ցորենի վաճառքով զբաղվող առետրականները: Արհեստատուներու կողմէ ընտրուած ղեկավարը՝ «շէյխ»-ը, կը գլխատրէր սասունցիներու համայնքը, կը հարթէր ներքին անհամաձայնութիւնները, կը կարգաւորէր արհեստի հետ կապուած դժուարութիւնները, կը վարէր սասունցիներու եւ Առաջնորդարանի միջեւ յարաբերութիւնները, կը հսկէր պետական հրահանգներու գործադրութեան ու այլն: Սասունցի շէյխերէն յայտնի էր Սլասի Պետիկը, իր ժամանակի Հալեպի երեսելի անճնատրութիւններէն մէկը, որ իբր «կորովի, քանիմաց եւ լրջախոհ անճ»՝ ազդեցիկ դիրք մը ունեցած է գաղութի ազգային-եկեղեցական շրջանակներուն մէջ: Խոշոր հարստութեան տէր Սլասի Պետիկ մեծ յարգանք եւ վստահութիւն վայելած է կառավարական շրջանակներուն մօտ, կարելոր ծառայութիւններ մատուցած է պետական-զինուորական իշխանութիւններուն, նոյնիսկ անգամ մը, ամբողջ մը ի՛նք հոգացած է Հալեպի քանակին ու սպայական գորախումբին ուտեստեղենը:<sup>19</sup> Սասունցիներու պարագլուխներէն եղած է Կերպէն, որ ծանօթ էր իր ազգասիրութեամբ ու քաջագործութիւններով, կը յիշուի որ անգամ մը սասունցիներու գլուխ անցնելով կռուի ելած է ազգապատկան հողերը քոնագրաւած օտաքներու դէմ եւ յաջողած է խափանել այդ ձեռնարկը: Սասունցիներուն պարագլուխներէն կը յիշուին նաեւ Սլասի Խաչօն, Յովհաննէս Աւետիսեան եւ ուրիշներ, որոնց անուան հետ կը կապուին սասունցիներու ծառայութիւններն ու մասնակցութիւնը գաղութին ազգային, եկեղեցական կեանքին:

Էսնաֆութիւններու մէջ համախմբուած սասունցի պանդուխտները կ'ապրէին աւանդական քարքերով, ընդունուած կարգերու համաձայն, օրինակ՝ դաւաճանական արարք կը համարուէր պանդուխտներու ամուսնութիւնը Հալեպի մէջ: «Այն որ այսպիսի արարք գործէր, կը լքուէր, կ'արհամարհուէր Սասունցիներէն եւ յարաբերութիւնն էր խզէին անկէ: Իսկ երբ անոնցմէ մէկուն ամուսնութեան լուրը հասներ Սասուն, անոր տնեցիք եւ զխղացիք սուգ կը պահէին, համարելով ամուսնացողը Սասնոյ համար մեռած, յաւիտենապէս կորսուած»<sup>20</sup>: Որքան ալ որ խստաքարոյ, այնուամենայնիւ այս կարգի օրէնքները ծառայած են պանդուխտներուն հարազատ օճախին՝ հայրենիքին հետ կապը ամուր պահելուն, պանդխտութեան պաճառած քաղում չարիքները մասամբ դիմագրաւելու, եւ որ ամէնաւերջականն է՝ հայրենի եզերքը վերջնականապէս չլքելու ու չամայացնելու մտահոգութեամբ:

1881թ.-ի Հալեպի Առաջնորդարանի արձանագրութիւններու համաձայն հալեպահայութիւնը քաղկացած է 425 տուն տեղաբնակ հայերէ եւ 470 պանդուխտներէ, որոնց մէջ 220-ը սասունցի:<sup>21</sup> Հետագայ տասնամեակներուն սասունցի պանդուխտներուն թիւը զգալիօրէն նուազած կը գտնենք: 1905թ. մի տեղեկագրութեան համաձայն, Հալեպի մէջ տեղաբնակ հայերուն թիւը եղած է 3000: Այս շրջանին հայ ազգաբնակչութեան մաս կը կազմէին 20 տարեկանէն վեր 853 պանդուխտներ, մօտ 320 ծառայողական

<sup>19</sup> Միքսէան, Պատմութիւն Հալեպի Հայոց, հ. 3, էջ 682:

<sup>20</sup> Նոյն տեղը, էջ 681:

<sup>21</sup> ԳԱԹ արխիւ, Թ. Ազատեանի ֆոնտ, ք. 3, վ. 46:

աշխատանքներով զբաղող գաղթականներ, ընդ որում սասունցիներուն թիւն է 150 հոգի:<sup>22</sup>

Յայտնի է, որ 19-րդ դարու վերջերուն էսնաֆութիւնները աստիճանաբար կը խամրին, իրենց դիրքերը զիջելով մոր ձեւատրուող ընկերութիւններուն եւ միութիւններուն:

Ինչպէս ամենուր, Հալեպի մէջ նոյնպէս ծանր էր պանդուխտներուն վիճակը: Բոլոր փաստերը կը վկայեն որ յատկապէս անտանելի եւ ծայր աստիճան թշուառ պայմաններու մէջ ապրած են սասունցի պանդուխտները, որոնք չնայած իրենց «չարաչար աշխատութեանց», գրեթէ միշտ եղած են գաղութին ամենէն աղքատ ու չքաւոր տարրը: Հալեպի սասունցի պանդուխտները, ընդհանրապէս աղտոտ վտտներու եւ գետնափոր նկուղներու մէջ կ'անցընէին իրենց կեանքը, կենցաղային վատագոյն պայմաններու մէջ: Այս պարագան անշուշտ իր անդրադարձը ձգած է սասունցիներու առողջական վիճակին վրայ, յաճախ մաւե սպառնալիք դառնալով անոնցմէ շատերուն կեանքին:

1900-ականներու սկիզբներուն, պանդուխտ սասունցիներու կացութիւնը այնքան սուր եւ օրհասական քնոյթ կը ստանայ, որ իր արձագանգը կը գտնէ մաւե ժամանակի պարբերական մամուլին մէջ: Այս շրջանին Հալեպէն տեղեկագրութիւնները ծայրահեղ թշուառ վիճակի մէջ կը ներկայացնեն սասունցիները: Այսպէս, Կ. Պոլսոյ «Տաճար»-ին մէջ լոյս տեսած իր մէկ յօդուածին մէջ, Հալեպի արժանաւոր քահանաներէն մէկը՝ սասունցի Սկրտիչ Քինյ. Մուրատեան, իր հայրենակիցներուն վիճակը նկարագրող տխուր պատկեր մը կու տայ. «Յաւալի է ըսել – կը գրէ Սկրտիչ Քինյ. – թէ այսքան ստուարաթիւ համայնքի մը մէջ [սասունցիներու – Վ. Բ.] չէ կարելի գտնել մէկ տնուոր եւ կամ պանդուխտ, որ ունենայ բարեկեցիկ վիճակ. ընդհակառակն ամենքն ալ աղքատ, թշուառ մարդիկ են»<sup>23</sup>:

Յօդուածագիրը այս խղճալի կացութեան գլխաւոր պատճառը կը տեսնէ սասունցի պանդուխտներու տգիտութեան եւ ծայր աստիճան «հին գլուխ եւ նախապաշարեալ» մարդիկ ըլլալնուն մէջ, որոնք իրենց երկար տարիներու դժուարին աշխարհաբան «արդար վաստակը յումպէտս կը վատեն գինետանց եւ սրճարանաց մէջ...»: Սկրտիչ Քինյ. ցաւով կը նշէ, որ անոնք «գետնափոր նկուղներու տամուկ անկիւնները կեանք վարելով, տարածած կը զառամին, ու կը կորսնցնեն իրենց առողջական վիճակը», որուն հետեւանքով «սասունցիներու մահուան տարիքին միջին թիւը, 27-էն անդին չսնցնիր»<sup>24</sup>:

Սասունցիներու այս ողբալի կացութեան մասին գրեթէ նոյն ձեւով կ'արտայայտուի հալեպահայ ծանօթ մտաւորական Իսկէնտէր Գարաճեան: «Արեւելեան մամուլ»-ին մէջ լոյսին բերուած յօդուածի մը մէջ, խօսելով Հալեպի հայ բնակչութեան մասին, դառնացած ու խիստ ոճով կը նկարագրէ սասունցիներու աղետալի կացութիւնը. «Մասունցիք, փութերու վատառողջ մթնոլորտին տակ կեղտոտ ու անխմած կեանք վարող դժբախտ արարածներէ կազմուած են, որոնք հակառակ իրենց զօրաւոր հսկայ կազմին, հետզհետէ կը ծիրիւն... եւ անհամար զոհեր կու տան, իսկ նիւթապէս ալ ի-

<sup>22</sup> Միրմէնեան, Պատմութիւն Հալեպի Հայոց, հ. 3, էջ 894:

<sup>23</sup> Մուրատեան Սկրտիչ Քինյ., Սասունցիները Հալեպի մէջ, տե՛ս Տաճար, Կ. Պոլիս, 1910, Հոկտեմբեր 9, էջ 644:

<sup>24</sup> Նոյն տեղը:

ըստի դեմ մրցելով իրարու կը վնասեն եւ շահածնին եւս վաշխառուներու քսակը կը լեցնեն... այս խեղճերը իրենց տգիտութեան հետ խաղամու, ծխամու եւ գինեմու ալ են...»<sup>25</sup>:

Ինչպէս արդէն ակնյայտ է, գաղութին մէջ սասունցիներու ընկերային տնտեսական կացութիւնը պարզապէս օրհասական բնոյթ ստացած էր, եւ քնական է, որ տեղւոյն ազգային հասարակական եւ եկեղեցական շրջանակները անտարբեր պիտի չմնային այս երեւոյթի հանդէպ, պարտաւորուելով նիւթական եւ քարոյական աջակցութիւն ցուցաբերել սասունցի հայրենակիցներուն, մասնաւորաբար՝ յատուկ այդ նպատակով քարեսիրական ընկերակցութիւն մը հաստատելով: 1908թ. 23 Յունուար թուակիր պաշտօնական մամակով, Հալէպի թեմի եռամբուն եւ ձեռներեց քահանաներէն մէկը՝ Յարութիւն Զեմյ. Եսայեան, այդ օրերուն հիւրաբար Հալէպ գտնուող Հմայեակ Վրդ. Երեցեանի հետ միասին տեղեկագիր մը կը մերկայացնեն տեղւոյ Զաղ. Ժողովին, ուր մասնաւորաբար ըսուած է. «Բերիարմակ սասունցի ազգայնոց քարոյական ու տնտեսական վիճակը, ժամանակի եւ միջավայրի հանգամանաց համապատասխան պայմաններու մէջ քարտբելու նպատակաւ, երեք չորս տարիներէ ի վեր մասնաւորաբար խնդրոյ առարկայ եղող Յանձնախումբը կազմուեցաւ անցեալ շաբաթ Առաջնորդարանիս մէջ»<sup>26</sup>: Նոյն՝ Յարութիւն Զեմյ.-ի եւ Հմայեակ Վրդ.-ի ամփոջական ջանքերով եւ իրենց «հսկողութեամբ», յիշեալ ընկերակցութեան շուրջ կը համախմբուին 51 «տնւոր եւ պանդուխտ» սասունցի հայրենակիցներ, որոնք քուտարկութեամբ կ'ընտրեն իրենց վարչական կազմը: Ըստ ամենայնի ընտրութիւնը կը կայանայ ներքին համաձայնութեամբ, մեծամասնութիւն կազմող փոսպաններէն կ'ընտրուին չորս, իսկ ջաղացպաններէն՝ երկու հոգի: Մասնաժողովին նախագահ կը նշանակուի Յարութիւն Զեմյ. Եսայեան: Վերոյիշեալ պաշտօնական գրութեամբ, Զաղ. Ժողովին կը մերկայացուին ընտրութեան արդիւնքները, ըստ որուն վտապաններու կողմէ ընտրուած անդամներն են՝ Յակոբ Շահմիրեան, Կալջօ Խնձորցի, Մովսէս Դալձորցի, Ախօ Մըլլեղցի, իսկ ջաղացպաններէն ընտրուածներն էին՝ Ոսկի Կնակեցի, Խաչօ Խըլմովցի:<sup>27</sup> Նոյն մամակով Զաղ. Ժողովէն կը խնդրուի ընտրուած կազմը համալրել պատկան ժողովին կողմէ նշանակուած եւս երկու անդամներով, որպէսզի լիարժէք կազմով գործելու սկսին:

Սասունցիներու մասնաժողովին նիւթական միջոցները պիտի գոյանային նոյն՝ «փուռ, խան կամ ջաղացքներու» մէջ աշխատող սասունցի հայրենակիցներէն հաւաքուած գումարներէ, ինչպէս եւ նուիրատուութիւններէ ու հանգանակութիւններէ:

Ընկերակցութիւնը իր առաջին նիստը կը գումարէ 1908 Փետրուար 1-ին, Յ. Զեմյ. Եսայեանի նախագահութեամբ եւ անդամներուն մեծ մասին մերկայութեամբ, որուն ընթացքին կը կազմուի դիւանը. ատենապետ կ'ընտրուի Յովսէփ Էֆ. Գալչնճեան, իսկ ատենադպիր՝ Կարապետ Էֆ. Թադոսեան: Նկատելի է որ դիւանը կազմուած է Առաջնորդարանին կողմէ նշա-

<sup>25</sup> Մեռեան ԱՄ. (նոյն ինքն՝ Իսկէնտէր Գարաճեան), Հալէպի հայ գաղութին անցեալն ու ներկան, տե՛ս՝ Արեւելեան Մամուլ, Չմիտնիա, 1906, Յունիս 14, էջ 614:

<sup>26</sup> Հալէպի Ազգ. Առաջնորդարանի Դիւան, Մտացուած Նամակներու թղթածրար քիւ 2, 1908, Յունուար 23 (յետ այսու՝ Հ. Ա. Ա. Դ. Մ. Ն. թղթ.):

<sup>27</sup> Նոյն տեղը:

մակուած անձերով, որուն պատճառը անկասկած սասունցի ազգայիններուն զրահանաչ չլլալն է: Ընտրութեան արդիւնքները կը վաւերացուին Քաղ. Ժողովի 1908 Փետրուար 28-ի նիստին:<sup>28</sup> Սասնաժողովը կ'ունենայ իր յատուկ կնիքը հետեւեալ արձանագրութեամբ. «ԻՐԱՒ.[ԱՐԱՐ] ՍԱՍ-ՆԱԺՈՂՈՎ ՍԱՍՈՒՆՅԻ ԱՐՀԵՍՏԱՒՈՐԱՅ. ՀԱԼԷՊ 1908»<sup>29</sup>:

Նորակազմ ընկերութիւնը, ելլելով տազնապալի իրավիճակէն, առաջ-նահերթ խնդիր կը նկատէ իր նիւթական միջոցներով դարմանատուն մը հաստատել, «որ միայն սասունցի հիւանդաց յատուկ է», ուր ծրիաքար պէտք է դարմանուին «ամուտէր անպաշտպան սասունցի «պէքեաքներ» [ա-մուրիներ – Վ. Բ.], որոնցմէ տարուէ տարի 25-28 մատղաշ զոհեր կը տրուէր ի գերեզման»<sup>30</sup>:

Այս պայմաններուն տակ, սասունցիներու մասնաժողովը եւ «նոցա դրամական օժանդակութեամբ քացուած դարմանատունը» քարերէր իր առաքելութիւնը կը սկսի թշուառ կացութեան մատնուած սասունցի հայրենա-կիցներուն մէջ:

Սակայն տարւոյն վերջաւորութեան, նախագահ Յարութիւն Քեմլ. Ե-սայեան, ինչպէս նաեւ ատենապետ Յ. Գալնճեան Քաղ. Ժողովին կը ներկայացնեն իրենց հրաժարականները,<sup>31</sup> որուն կը հետեւի Առաջնորդական տեղապահ եւ Քաղ. Ժողովի նախագահ Շահէ Վրդ. Գասպարեանին պատասխան գրութիւնը, ուր Շահէ Վրդ. գնահատելով եւ իր վստահութիւնը յայտնելով Յ. Քեմլ. Եսայեանին՝ կը յորդորէ մնալ իր պաշտօնին անկախ մասնաժողովին նիւթական դժուարութիւններէն: Յարութիւն Քեմլ. մէկ այլ նամակով Քաղ. Ժողովի ուշադրութեան կը յանձնէ իր հրաժարականին դրդապատճառները, յայտնելով, որ անոնք ոչ թէ մասնաժողովին նիւթական աննպաստ պայմաններն էին, այլ «պարզամիտ սասունցւոց միտք պղտորող» քանի մը անխորհուրդ անձերու կողմէ յարուցուած խոչընդոտ-ները: Ինչպէս կ'երեւի Յ. Քեմլ. Եսայեանի արտայայտութենէն, ընկերակ-ցութեան անդամներուն միջեւ որոշ տարակարծութիւններ ծագած են, որոնց հետեւանքով մասնաժողովը կը կանգնի դժուարութիւններու առջեւ: Այնուհետեւ, Շահէ Վրդ. Գասպարեանի պատասխան գրութենէն կը տեղե-կանանք, որ անհամաձայնութիւնը մասնաժողովին նիւթական հասոյթնե-րուն շուրջ կը դառնար: Հետաքրքրական է յատկապէս Առաջնորդական տեղապահին հետեւեալ նկատողութիւնը, թէ «ազգային շրջանակի մէջ նպաստից անվերջ շարքը այլեւս տաղտկացուցիչ հանգամանք մը ստա-ցած են»: Ուստի «քացառութիւն ըլլալով այն մուրները որք քարեսէրներու կողմանէ յօժարական այս հաստատութեան կը մուիրուին», ժողովը որոշում կ'առնէ՝ միայն սասունցի ազգայիններու միջավայրին մէջ կատա-րուած հանգանակութիւններով եւ մուիրատութիւններով հնարաւորին չափ սատարել հիւանդանոցին, ինչպէս նախապէս մասնաժողովին հիմնա-դրութիւնն ալ այդ պայմաններով կատարուած էր: Կարելի է եզրակացնել, որ դարմանատունը նիւթական միջոցներով ապահովելու ջանքերը որոշ ինքնակամ քնոյթ ստացած են, հնարաւոր է որ խախտուած է նախապէս

<sup>28</sup> Հ.Ա.Ա.Դ.Ս.Ն. թղթ. թիւ 2, 1908, Փետրուար 19:

<sup>29</sup> Նոյն տեղը, Դեկտեմբեր 5:

<sup>30</sup> Հ.Ա.Ա.Դ. Առաքուած նամակներու տետրակ, թիւ 6, էջ 220-221, 1908, Սեպ-տեմբեր 17:

<sup>31</sup> Նոյն տեղը:

հաստատուած կանոնադրութիւնը, որն ալ առիթ տուած է դժգոհութիւններու եւ բողոքներու: Այդ է պատճառը թերեւս, որ Առաջնորդական տեղապահը, վերոյիշեալ գրութեան մէջ վերատեսութեան կ'ենթարկէ մասնաժողովին եւ դարմանատան եկամտից աղբիւրներու հանգամանքը, շեշտելով որ յիշեալ հաստատութիւնը պանդուխտ սասունցի ազգայինները պատսպարելու եւ դարմանելու համար միայն պիտի ծառայէր, անոր մատակարարութիւնն ալ, բնական է, որ նոյն ազգայիններու միջավայրէն ըլլար: Միանգամայն պարզ է, որ հիմնական խնդիրը հաւաքուած նպաստներու դաշտն էր, այսինքն ընկերակցութեան գործունէութեան սահմանները, այս պարագային՝ սասունցի հայրենակիցներու շրջանակը, որմէ դուրս մասնաժողովը փաստօրէն իրատուօրէն չունէր գործունէութիւն ծաւալելու: Շահէ Վրդ., յիշեալ նամակով դարձեալ կը յորդորէ Յ. Զեյնյ. Եսայեանը հիւանդանոցին մատակարարութեան հոգածու ըլլալ եւ «շարունակել գործի մը, որ նպատակին մէջ գովելի ու մարդասիրական է»:

Բայց խնդիրը եւ անոր շուրջ եղած տարամերժ կարծիքները, ըստ երեւոյթին քանձր քննութեամբ ստացած էին եւ արդէն իսկ խումբը ջլատած: Հնարատր է, որ այս պայմաններուն տակ «Սասունցի Արհեստատրաց Մասնախումբ»-ը լուծարուած եւ դադրեցուցած ըլլայ իր գործունէութիւնը, սասունցի գաղթականները վերստին մատնելով անմխիթար ու անօգնական կացութեան, ինչ որ կը վկայեն մասնաժողովին հաստատումէն մէկ-երկու տարի անց մամուլին մէջ տեղ գտած վերոյիշեալ անդեկագրութիւնները:

## СТРАНИЦЫ ИСТОРИИ АРМЯНСКОЙ КОЛОНИИ АЛЕППО

В. КЕШИШЯН

### Р е з ю м е

В эллинистическую эпоху, затем в VIII-XI вв. и после этого в результате развития торгово-культурных связей, а также вследствие эмиграции из Армении численность Армянского населения в городах Сирии Междуречья достигла значительных размеров. В XIV-XVII вв. большое количество армян вновь переселяется в Сирию. Если большая часть армян переселившихся в Алеппо в XVI-XVII вв., были крупными купцами и ремесленниками, то начиная с XVIII в. здесь сосредотачиваются маргинальные слои населения из Западной Армении. В XVIII-XIX вв. в связи с упадком торгово-экономической значимости Алеппо и из-за османской политики, препятствующей экономическому развитию, местная армянская колония утрачивает свои ведущие позиции.